

## ԳԻՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԱԶԱՑ ԳԱՂՈՒԹՈՒՄ

### Ա. ԴՈՂՈՒՔԱՆՑԱՆ

Առաջին անգամ հայերը լեհաստանում հաստատվել են XI դարում՝ արտագաղթելով հիմնականում հայոց երրեմնի շին ու մեծահարուստ մայրաքաղաք Անիից: Հետագայում, հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, ավելի է շատանում հայկական տարրը լեհաստանի տարածքի վրա, նպաստելով գաղթօջախի կայունացմանն ու հզորացմանը:

Չնայած մեզ հասած փաստերը հավաստում են, որ XI—XIV դարերում հայերն հիմնել ու զարգացրել են իրենց մտավոր մշակութային կյանքը լեհաստանում, սակայն այդ փաստերը զուրկ են մանրամասնություններից և կոնկրետությունից: Անհրաժեշտ և խոստուն մանրամասնությունների հանդիպում ենք գաղթօջախի պատմության ավելի ուշ ժամանակների վերաբերյալ: Այս առումով գրավոր գրական հուշարձանների և մատենագրական ուշագրավ փաստերի հանդիպում ենք հատկապես XVI—XVIII դարերում:

Փաստերը վկայում են, որ լեհահայ գաղութում ստեղծվել, ինչպես նաև արտագրվել ու բազմացվել են հայկական շատ ձեռագրեր: Սակայն այստեղ էլ նրանց մեծ մասը մատնվել է կորստյան և ոչնչացման: Այդպես բազմաթիվ հայ ձեռագրեր են ոչնչացել կաթոլիկություն ընդունած լեհահայերի առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի նախաձեռնությամբ: Այդ մասին Սիմեոն Լեհացին իր հայտնի «Վիպասանութիւն» քերթվածում խորին ցավով գրում է.

Յետոյ զամէն գրեանս ժողովեաց,  
Որ ի գրատան էին պահած,  
Անետաբանի ոսկով գրած,  
Արծաքապատ կողքով կազմած:

Անգիտ գրեանք որ Լով կային՝  
Սրտայ խազնիցն ելեալ էին,  
Ազնի գրէր, շաբակեցին,  
Յրուեաց կորոյս զամենեպէ՛ն:

Այս կարգի վայրագություններից հետո, լեհահայերից մեզ հասած ձեռագրերի թիվը կազմում է շուրջ 200 հատոր, որոնց մի մասը պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում, մնացածները ցրված են աշխարհի այլ գրադարաններում<sup>1</sup>:

Խոսելով լեհահայ գաղութում զարգացող մատենագրական մշակույթի մասին՝ շենք կարող չհիշել նաև այն իրողությունը, որ այդտեղ (վճռում) 1616 թվականին Հովհաննես Փարմատանենց Բաղիշեցի երեցը հիմնում է հայկական տպարան<sup>2</sup>, որն ինքնին վկայում է տեղի քնակության գրասիրական պահանջների բարձր մակարդակի մասին:

Լեհահայ գաղութում ծնված մտավորականների մեջ աչքի են ընկնում ժամանակագիրները, տաղերգուները, բանարանագիրները: Այս գաղթօջախում հայ թատրոնը մտնում է նոր և արժանահիշատակ հունի մեջ և արժեքավոր էչեր է գրանցում նրա հինավուրց պատմության մեջ:

Լեհահայ գաղթօջախի ակնաավոր ժամանակագիրներից են Սիմեոն Լեհացին, Հովհաննես Կամենեցցին, Սեֆիանոս Ռոշքան, Հովհաննես Ավագերեցը և ուրիշներ: Այս պատմագիրների կրկերը կարևոր տեղեկություններ են հաղորդում լեհահայերի կյանքի մասին: Դրանք միաժամանակ մեծարժեք պատմական փաստաթղթեր են լեհաստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի, ինչպես նաև լեհաստանի հետ առնչված այլ երկրների վերաբերյալ: Նրանցում երբեմն հանդիպում

<sup>1</sup> Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 214:

<sup>2</sup> Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964, էջ 229:

<sup>3</sup> Սիմեոն Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 339: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Եր., 1972, էջ 377:

ենք այնպիսի փաստերի, որպիսիք չկան այլ պատմագիրների երկերում: 2. Ոսկյանը հրատարակելով Ստեփանոս Ռոշբալի ժամանակագրությունը, դիտել է տալիս, որ այն «իր հայկական կրտորներուն մէջ ունի բավական նորություններ: Գարձեալ կըսող է աղբյուրներէ, որոնք մեզի մատչելի չեն եղած մինչեւ այսօր եւ գուցէ կորսված ըլլան»<sup>4</sup>:

Արդեն հայտնի իրողություն է, որ գեղարվեստական արձակը հայ գրականության հին և միջին շրջանում իր արտահայտությունն է գտել մեծ մասամբ պատմիչների, ժամանակագիրների, ինչպես նաև ուղեգրությունների հեղինակների երկերում:

Լեհահայ ժամանակագրությունների մեջ գրական տեսանկյունից հատկապես ուշագրավ է Սիմեոն Լեհացու ուղեգրությունը: Այստեղից իմանում ենք, որ Սիմեոն Լեհացին որպես էջմիածնի նվիրակ մեկնել է Ղազարի պապի մոտ և միաժամանակ գրառել է իր առաքելության հետ կապված դեպքերն ու ճամփորդական մանրամասները: Այդ ուղևորության ընթացքում նա այցելել է մշակութային այնպիսի կարևոր կենտրոններ ու երկրներ, ինչպիսիք են, օրինակ, Կ. Պոլիսը, Ղազար, Եգիպտոսը և այլն: Այդ ժամանակ Սիմեոն Լեհացին եղել է նաև մայր հայրենիքում՝ Հայաստանում: Ուղևորության վերջին մասը նվիրված է Լեհաստանին և նրա պատմական անցքերին: Սիմեոն Լեհացու ճանապարհորդությունը տևել է 12 տարի, ինչպես վկայում է ինքը ուղեգրության մեջ. «Եւ կատարեցաւ երկոտասան ամ պանդխտութեան իմոյ»<sup>5</sup>:

Սիմեոն Լեհացու ուղեգրությունը գրված է գրաբարխառն աշխարհարարով: Քեւ լեզուն տեղ-տեղ պարզունակ է, սակայն միաժամանակ կենդանի է և վարակիչ: Ուղեգրողը հանդես է գալիս որպես իր ժամանակի առաջադեմ անձնավորություններից մեկը: Նա շեղմ հայրենասեր է և իր ճամփորդության որ կետում էլ գտնվելիս է եղել, զգացել է տվել իր հայ լինելը և դեպքերը թննել է իր ազգային հասկացողությունների դիտակետով: Նրան հիացմունք են պատճառում եվրոպական կյանքի և կենցաղի առաջադիմական կողմերը: Նա բավականին ուշագիր է այլ ժողովուրդների քաղաքակրթության նկատմամբ, որի մասին դատում է անմիջականորեն ու բարի նախանձախնդրությամբ: Այդ միտումով, օրինակ, նա նկարագրում է Ղազար քաղաքի տեսարժան վայրերը, սրբավայրերը, հիացմունքով պատկերում է ճարտարապետական հուշարձանների կատարելությունը, խոսում նաև անտիկ շրջանի հուշարձանների մասին:

Ծեղ-տեղ նա իր ուղեգրությունը համեմտում է ողբերով, որոնց մի մասը հորինում է շափածո: Սիմեոն Լեհացին իր ճանապարհորդության բոլոր կետերում որոնում է հատկապես հային, հայկականը: Նրա ուղեգրության Լեհաստանին վերաբերող հատվածը շատ կարևոր է Լեհահայերի պատմության էջերը ճշգրիտ պատկերացնելու առումով:

Սիմեոն Լեհացին մանրամասն խոսում է լվով քաղաքի մասին, նշում, որ այնտեղ կա զրպարատուն, որն ունի 80 աշակերտ և ուսուցանվող հետևյալ առարկաները. «գծրածշտական, Քերական, Առողջանութիւն, Քարգմանութիւն եւ զԱրվեստս համարողական»<sup>6</sup>:

Լվովում քննվողը հայ քաղաքացիներին ժամանակագիրը ներկայացնում է որպես փարթամ կյանքով ապրող մարդիկ, որոնք իշխանների նման փառավոր են, հագնում են մեծագին զգեստներ, նրանց մեծ մասը վաճառականներ են<sup>7</sup>: Նա խոսում է նաև հայ հոգևոր հաստատությունների մասին, որոնք անցյալում եղել են ծաղկուն վիճակում, իսկ իր ժամանակներում խամրած են, և հայրենասեր կրոնավորին դա համակում է խորին թախիծով:

Ինչպես երևում է ուղեգրությունից և ինչպես պետք էր սպասել, Սիմեոն Լեհացին ծանոթ է հայ պատմագրության նշանավոր կոթողներին: Ծակատամարտեր նկարագրելիս նա հետևում է դասական պատմիչների ոճին և պատկերավոր մտածողությանը: Նրանց հետևելով է, որ նա հրմտորեն պատկերել է, օրինակ, այն թուրք փաշայի կերպարը, որը մեծաքանակ զորքով շարժվել է Լեհաստան՝ Զիգիզմունդ արքայի դեմ կռվելու և Լեհաստանը գրավելու, սակայն պարտվել է ու իր զորականների խնդրանքով դիմել է ատիված խաղաղության: «Եսկ փքացեալ հպարտ գոռոզն,— գրում է նա,— որպէս գարծիւ եւ գոչէր որպէս գառիւծ, իրրեւ լուան, կակդացաւ եւ իրրեւ զաղվես նկուն դարձան»<sup>8</sup>:

Աղբիթիկ են նրա՝ որպես ականատեսի նկարագրած էջերը թուրքերի ու թաթարների ձեռքից Լեհ ժողովրդի կրած տառապանքների մասին: Սրածության, գերեվարության, բռնությունների տեսարանների նկարագրությունները վեր են ածվում սրտաուշ ողբասացության:

<sup>4</sup> Ստեփանոս Ռոշբա, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964, էջ 41:

<sup>5</sup> Սիմեոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 335:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 338:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 366:

Միմեոն լեհացու ուղեգրութիւնից երևում է, որ լեհահայ գաղթաշարժում գրականութեան և ընդհանրապէս մշակութի զարգացումը կապված է եղել մայր հայրենիքի հետ: Այն ավանդականի շարունակութիւնն է եղել նոր վայրում. շատ անգամ էլ՝ ավանդականի կրկնութիւնն է, այն պահպանելու ակնհայտ ցանկութեամբ և ճիգով:

Միմեոն լեհացու ժամանակագրութեան մեջ կան նաև ողբեր: Այդ ողբերով նա կապվում է հայ քնարերգութեան հետ: Մասնավորապէս զգալի է պանդխտութեան երգերի ազդեցութիւնը նրա ողբերի վրա: Ուստի և նշված ողբերը կարելի է կոչել պանդխտութեան երգեր: Միմեոն լեհացին դրանք հորինել է իր ճանապարհորդութեան ընթացքում, երբ ավելի մոտիկից է ծանոթացել հայ պանդխտների կյանքին: Ինքն էլ ժամանակ առ ժամանակ իրեն զգացել է պանդխտ և իր ապրումներն ու տխրահառու զեղումները պատկերել ժողովրդական բանահյուսների օրինակով:

«Ճաշխարհս ես ի շուրջ եկի» սկզբնատողով ողբը լավագոյնն է ուղեգրութեան մեջ եղած ողբերից: Հեղինակը նրանում ողբում է պանդխտ մարդու անօգնական վիճակը օտարութեան մեջ և մտածում է, թե գուցե մայրն է իրեն ծնելիս անիծել, որ պանդխտ լինի: Նա պատկերում է նաև պանդխտի կյանքի պայմանները: Պանդուխտը օտար երկրում անտուն է և անօթեան: Նրա սնարը սալ քարն է, իսկ անկողինը՝ հողը: Այս պատկերին մենք հանդիպում ենք ժողովրդական բանահյուսութեան մեջ, ինչպէս նաև պանդխտութեան մոտիվի խոշոր երգիչ, XV դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի մոտ:

Միմեոն լեհացին հեղինակ է նաև մի վիպասանութեան, որն առաջին անգամ, իբրև անանուն գործ, տպագրել է Ղեռնդ Ալիշանը իր «Կամենից» գրքում<sup>9</sup>: Հետագայում Ներսես Ակինյանը ապացուցում է, որ այդ «Վիպասանութեան» հեղինակը ոչ այլ ոք է, քան Միմեոն լեհացին<sup>10</sup>: Այս ստեղծագործութիւնը («Վիպասանութիւն Նիկոլական») կարևոր պատմական փաստաթուղթ է լեհահայերի կաթողիկոս դավանանքին փոխվելու վերաբերյալ և ունի ճանաչողական ակնհայտ արժանիքներ: Այն իրավամբ կարելի է անվանել պատմական պոեմ, որովհետև այդտեղ կերտված բոլոր գործող անձինք պատմական են: Հեղինակը գայրութիւն է նկարագրում ապաշրջա՝ Մելքիսեթ կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս օծված և լեհահայ գաղութի պարագլուխը դառնալու միտումով կաթողիկոսութեան ընդունած Նիկոլ Քորոսովիչի շահատակութիւնները, ինչպէս նաև հայ ժողովրդի դառնաղետ վիճակը այդ յուրօրինակ դավանափոխութեան մեջ: Ինչպէս ողբ ուղեգրութեան մեջ, այնպէս էլ այստեղ Միմեոն լեհացին հանդես է գալիս որպէս իսկական հայրենասեր: Դավանափոխութեան իրողութիւնը ստիպում է նրան նորից վերադառնալ իր ժողովրդի պատմական ճակատագրին և խորին վշտով ողբալ ազգային պետականութեան կորուստը, որի հետեանքն է նաև լեհահայերի դառը վիճակը:

Մե՛ք բազաւո՛ր շունքիմ օծած,  
Ոչ իշխանութիւն մեզ տրած,  
Ծամէ՛ն ազգաց եմք մեք կոխած  
Քրիստոնէից եւ յայլազգեազ:

Հեղինակը տեսանելի ձևով ներկայացնում է Նիկոլ Քորոսովիչի դեմ բռնկված փոթորիտ հուզումները, երա ասպարեղ մտնելը լեհահայ կյանքում համարում է համաժողովրդական փորձանք, իսկ իրեն՝ Նիկոլին, անվանում է դավաճան Վասակ: Նա մանրամասն նկարագրում է այն շարիքները, որ բարդվել են այդ ժամանակ հայ համայնքի գլխին: Սկսել են վերանալ ազգային ծեսերով կատարվող հարսանիքները, թաղումները և այլն: Այս իրավիճակը նորից է ստիպում բանաստեղծին «Վիպասանութեան» մեջ մի անգամ էլ դառնալու հայրենի երկրի վաղձմի փառքի ու անկախութեան ողբերգուն: Հեղինակը, սակս հետեւելով Ներսես Շնորհալու «Ողբ Եգիպտոս» պոեմին, հիշում է աշխարհասփյուռ հայերի տառապանքները և զգացված հոգով հարցնում.

Ո՞ւր են գաւառք մեր հայրենի,  
Ո՞ւր են արտո՛ք հայրապետի,  
Ո՞ւր կան քախտե՛րք քազաւորի՝  
Մե՛ծ Արշակայ և Տրգաւորի՞!

Ընդգծելով պետականութեան կորուստը և հայրենիքում անգամ իշխանների վերանալու պարագան, Միմեոն լեհացին այդ հենքի վրա խարազանում է ժողովրդի միակ տնօրեններին՝ հոգեվորականներին, որոնք ազգի գլխին բերում են նորանոր շարիքներ, ուստի բանաստեղծը նրանց անվանում է սեւազուլիք մեր անբարիք:

<sup>9</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 202—214:

<sup>10</sup> Միմեոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 403: Տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1936, էջ 246—258:

<sup>11</sup> Ղ. Ալիշան, Կամենից, էջ 212:

Լեհահայ գաղութը տվել է նաև տաղասացներ, որոնց մեջ ուշագրավ են XVI—XVII դարերի բանաստեղծներ Ղազար Թոխաթցին, Մինաս Թոխաթցին, Հակոբ Թոխաթցին, Պարսամ Տրապիզոնեցին և ուրիշներ<sup>12</sup>, որոնք գրել են ողբեր, ներբողներ, տաղեր, երգիծական բանաստեղծություններ: Այս տաղասացները թեև հետագած են հայրենիքից, բայց իրենց մտորումներով և ապրումներով մշտապես նրա հետ են եղել: Դա էլ պայմանավորել է նրանց ստեղծագործությունների թեմատիկան և բովանդակությունը:

Ղազար Թոխաթցին գրել է «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքի», «Ողբ ի վերայ կոտորածին Թոխաթի», «Ողբ ի սովոյն Թոխաթի»<sup>13</sup>: Այս երեք գործերն էլ կապված են հեղինակի ծննդավայր Թոխաթի հետ, որոնցից առաջինում փառարանում է իր ծննդավայրի՝ քարեկեցիկ, փարթամ ու վաճառաշահ քաղաքի կյանքը, անվանում նրան «փոքր Ստամբուլ»: Վերջին երկու գործերում, ինչպես հուշում են վերնագրերը, բանաստեղծը ողբում է իր հայրենի քաղաքին հասած ազետները՝ սովն ու կոտորածը:

Հատկապես ուշագրավ է Մինաս Թոխաթցու (կոչվել է նաև Լեհացի) «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» ընդարձակ բանաստեղծությունը: Այստեղ պատկերված են Մուղավիտայի թագավոր Շտեֆան Ռարեչի (իշխել է 1551—1552 թթ.) հալածանքները հայերի դեմ: Վերջինս պահանջում էր, որ հայերը հրաժարվեին իրենց հավատից և ընդունեին օրթոդոքս դավանանք: Կարևորն այն է, որ ողբը գրվել է դեպքի թարմ ազդեցությամբ, արդյունք է ականատեսի ապրումների: Ուշագրավ է ողբի այն հատվածը, որտեղ պատկերված են Խաչատուր անունով մի քաղասիրտ երեցի տառապանքները. նրա երկու աչքը փորում են, բայց նա դավանափոխ չի լինում, իսկ երբ սպառնում են սպանել կնոջն ու երեխաներին, նա տեղի է տալիս: «Ողբում» պատկերված է նաև, թե ինչպես թագավորի բռնությունների պատճառով ոչնչանում են մեծաթանակ հայկական ձեռագրեր.

Ձարձարապատ զավետաբեին  
Ձանգիե գրեանք ի Վեստեռեին...  
Եւ փայտի պէս կըտորեցին,  
Այն անօրէն պիղծ օլախեին  
Ձամէն գրեանքն այրեցիւն<sup>14</sup>:

Այս ողբը, որ կրել է ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմի ազդեցությունը, սկզբնաղբյուր է Մուղավիտայի հայերի պատմության վերաբերյալ:

Այս կարգերի ողբերի մեջ կարևոր է նաև Հակոբ Թոխաթցու «Տաղ և ողբանք ի վերայ Եղուկիա քաղաքին» գործը: Եվդոկիան նույն ինքը Թոխաթն է, որի կործանումը ողբում է Հակոբ Թոխաթցին: Այստեղ ցնցող են շալալիների ասպատակությունների հետևանքով հայրենի քաղաքին հասած հարվածները, մանավանդ երբ հեղինակը նկարագրում է Թոխաթի երբեմնի ճոխ ու փարթամ կյանքը և դրան հակադրում աղետալի ներկան. գեղեցիկ ծաղկանոցներին փոխարինել են ավերակները, որոնց վրա «բուն ճիչեր»: Բանաստեղծը խորապես ազդված դիմում է հայրենի քաղաքին և հարցնում.

Թոխաք քաղաք՝ ատաղե ի,  
Քո երխուրիւնդ յէ՞ր շերեի,  
Արդ ես եղեալ դու. ամայի  
Եւ երչաւակ ամէն ազգի<sup>15</sup>:

Այդուամենայնիվ ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյի» ազդեցությամբ հեղինակը լավատեսությամբ է ավարտում պոեմը, երազելով, հավատարիմ և հավատացնելով, թե Թոխաթը կվերածնվի մոխիրներից և յոթնապատիկ պերճաշուք կդառնա:

Լեհահայ բանաստեղծների ստեղծագործություններում հատուկ տեղ է տրված դեպի իրենց ուսուցիչներն ու նշանավոր հայրենակիցներն ունեցած երախտագիտությունը: Սրանք ներբող-

<sup>12</sup> Առաջին երեք տաղասացների մասին մանրամասն տե՛ս Ն. Ալիբեյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921:

<sup>13</sup> Այս երկու ողբերը պահպանված են եղել բանասեր Շավարշ Սահակյանին պատկանած մի ձեռագրում և ոչնչացվել են 1915 թ. եղեռնի ժամանակ: Տե՛ս Պ. Խաչատուրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Եր., 1969, էջ 146:

<sup>14</sup> Ղ. Ալիբեյան, Կամենից, էջ 22:

<sup>15</sup> Պ. Խաչատուրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, էջ 271—272:

ոտանավորներն են, որտեղ գովասանքի առարկան իրենց քաջածանոթ անձնավորություններն են։ Այս առումով ուշադրավ են Հակոբ Թոխաթցու երկու տաղերն՝ ուղղված իր ուսուցիչ Հակոբ Այվաթենցիին։ Տաղասացը դրանցից մեկը գետեղել է այսպիսի փաստահարուստ խորագրի տակ. «Ի Յակոբ իրիցն է ասացեալ ի գեղողով ոտանաւորս ի դէմս վարժապետին իւրոյ Յակոբ քահա-նային, որ ասի Այվաթենց։ Եւ իւրոյ մականուն ասէն Թոխաթցի, Բարով տէր Յակոբ, որ է այժմ ի Լեհաց տուն Զամուցայ»<sup>16</sup>։

Մի ուրիշ բանաստեղծ՝ Ղազար Թոխաթցին, ներբողյան է նվիրել Լեմբերգի (այսպէ՛ կամե-նիցի) արքեպիսկոպոս Կարապետ վարդապետին, որը լեհահայ գաղութի նշանավոր դեմքերից էր և անձնական մտերմությամբ կապված էր տաղասացի հետ։ Այն ունի այսպիսի խորագիր. «Փովա-սանէ Կարապետ արքեպիսկոպոսի ի Թոխաթցի Ղազար եպիսկոպոսէ ասացեալ»։ Այստեղ Ղ. Թո-խաթցին թեթևակի խոսում է ժամանակի պատմական ծանր իրադարձությունների մասին։ Ապա անդրադառնում է օտար ասիերում իր միակ նեցուկ Կարապետ արքեպիսկոպոսին, փառաբանում է նրան՝ որպէս իր ուսուցչի՝ ազատութիւն տալով անձնական ապրումներին։

Լեհահայ գաղթօրայի գրական միջուկում են ծնվել նաև հայ երգիծական քնարերգու-թյան առանձին նմուշները։ Սրանք երևան են եկել որպէս զավեշտի արտահայտություններ՝ նա-խապատրաստելով հայ երգիծական քնարերգութեան ծնունդը, որի առաջին մեծ ներկայացու-ցիչը բուն Հայաստանում դարձավ Նաղաշ Հովնաթանը։ Անշուշտ, այս երևույթն ունեցել է կարե-վոր նշանակություն և զգալի դեր է կատարել հայ միջնադարյան բանաստեղծութեան ընդգրկում-ների լայնացման գործում։ Նշված մոտիվի օգնութեամբ է որ ավելի հանգամանորեն են ներկայաց-ված XVI—XVII դարերի հայ հոգևորականութեան բարբրի ու հայացքների մեջ տեղի ունեցած էական փոփոխությունները, աշխարհիկ կյանքի ձեռք բերած նշանակությունը նրանց համար, ինչպէս նաև հոգևոր դասի կենցաղային առօրյայի որոշ կողմերը։ Այս կարգի գործերից ուշադրավ են հատկապէս Մինաս Թոխաթցու «Գովասանք հերիսայի» և Պարսամ Տրապիզոնցու «Վասն ակ-ռայի» երգիծական տաղերը։

Գրավոր տաղասացութեան կողքին լեհահայ գաղութում իր զարգացումն է ունեցել նաև ժո-ղովրդական բանահյուսութիւնը, և նրա առաջնային մոտիվը ևս, պատմական ճակատագրի թե-լադրանքով, պիտի լինեն պանդխտութեան մոտիվը։ Այսպէս ասելով, նկատի ունենք հայ միջնա-դարի ժողովրդական գողութիւն իրգեղից մեկը, որն սկսվում է «Քո ձագն ի Անի տեսայ» տողով<sup>17</sup>։ Այն գրի է առնված լեհահայ գաղութում։ Անշուշտ, այս տաղը ծնվել է Անիում, բայց գաղթա-կանների հետ տեղափոխվելով Լեհաստան, դարձել է նաև այդտեղի հայութեան սիրած երգերից մեկը։ Ողբում է որդեկորույս կաքավը։ Հրեշտակը հարցնում է նրան, թե ո՞րն է ողբի պատճառը, և զայրացած հավքը նրան անվանում է «ժուռ դատավոր», ապա նկարագրում իրենից խլված և վաճառքի հանված ձագուկի ծանր վիճակը, ինչպէս և իր ծնողական վիշտն ու ցատումը.

— Քո ձագն ի Անի տեսայ,  
Ի Անի ու Սուրբ Եղանի.  
Քո ձագս՝ ի ծախողին գրկին,  
Կու եայլէ ի դէմ գնողին.  
— Ծախեցէ՛ք ու մի վախէ՛ք,  
Վա՛յ հագար իմ կորսբեօղին<sup>18</sup>։

Լեհահայ գաղութի գրականութեան հարստություններից են նաև այն ողբերգությունները, որ-րոնք գրվել են գրաբար լեզվով և բեմադրվել Լվովի դպրոցական թատրոնում<sup>19</sup>։ Այդպիսին է, օրի-նակ, «Սրբուհի կոյսն Հռիփսիմէ»<sup>20</sup> պիեսը։ Նրա մասին հիշատակություն կա, որ առաջին անգամ բեմադրվել է Լեհաստանում, 1668 թ., և հեղինակն է կաթոլիկ միսիոներ Ալեքսիանոս Պիդուե<sup>21</sup>։ Նա տիրապետել է գրաբար լեզվին, ծանոթ է եղել հայ հին մատենագրութեանը և այդ ողբերգու-

<sup>16</sup> Հ. Սահակյան, *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը*, Եր., 1975, էջ 66։

<sup>17</sup> Առ. Մեհացիական, *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, Եր., 1956, էջ 206։

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 206։

<sup>19</sup> Տե՛ս Գ. Առնյան, *Թատրոնը Հին Հայաստանում*, Եր., 1941, էջ 115։

<sup>20</sup> «Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմա», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 203։

<sup>21</sup> *Ողբերգությունը տե՛ս «Քաղմավէպ», 1884, էջ 329—336, 1885, էջ 33—38, 211—217, 1886, էջ 35—43։*

թյունը գրել է գրաբարով: Այդ ողբերգութիւնն ուշագրով ուսումնասիրութիւնն է նմիրել Ֆրանսիացի նշանավոր հայագետ Սեն-Մարտենը<sup>22</sup>:

«Հռիփսիմե» ողբերգութիւնն նյութը վերցված է Ագաթանգեղոսից: Հռիփսիմե կույր միջնադարի հայ մատենագրութեան մեջ հաճախ հիշատակվող և բանաստեղծական ներշնչանքի աղբյուր դարձած կերպար է: Ջնայած նրան նմիրված բոլոր քերթովածներէ սկզբնաղբյուրը Ագաթանգեղոսն է, բայց այն տարբեր հեղինակների գրչի տակ ստացել է տարբեր մեկնաբանում և դարձել է գեղարվեստական իդեալի կրող: Գեոևս V դարում Հռիփսիմեին և Հռիփսիմյանց կույսերին հրաշալի ներբող է նմիրել պատմահայր Մովսէս Խորենացին: VII դարում նրան փառաբանել է նշանավոր կաթողիկոս Կոմիտասը «Անձինք նուփրեալք» շարականով: Հռիփսիմյաններին բանաստեղծական ներշնչանքով է երգել նաև XII դարի մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալին:

Ալեքսիանոս Պիղուն էլ իր նյութը ընտրելով Հռիփսիմեի կյանքը, հորինում է վերահիշյալ ողբերգութիւնը, որի մեջ պատմական և առասպելական կերպարների կողքին ավելացնում է մտացածին նոր հերոսներ: Ողբերգութիւնն հիմքում ընկած է կրոնական թեման: Հեղինակը կարողացել է բավականին տեսանելի դարձնել քրիստոնեւոթյան և հեթանոսութեան միջև եղած պայքարը՝ ավարտված քրիստոնեւոթյան հաղթանակով: Պիղուն ստեղծում է նաև բազմաթիվ տեսարաններ, որոնք չկան Ագաթանգեղոսի վկայաբանութեան մեջ: Ինչպես երևում է, նա Ագաթանգեղոսից բացի ուսումնասիրել է վկայաբանական լրացուցիչ նյութեր:

«Հռիփսիմե» ողբերգութիւնը գրված է կլասիցիստական գրականութեան պահանջներով, սակայն երբեմն շեղվում է դեպի իրական-ռեալականը, և դա հօգուտ ողբերգութեան գեղարվեստականութեան:

Ողբերգութեան մեջ աշխարհիկ հայեցակետով մեծ տեղ է տրված Տրդատի՝ Հռիփսիմեի նրկատմամբ ունեցած սիրուն: Հեղինակը, սակայն, սիրո այդ հանգույցը ավելի բարդացնելու համար Հռիփսիմեին սիրահարեցնում է նաև Տրդատ արքայի մտերիմ իշխան Կարենին: Այսպիսով, ողբերգութեան առաջ է ընթանում պահպանելով երկու զուգահեռներ՝ Հռիփսիմե—Տրդատ, Հռիփսիմե—Կարեն, որով է ստեղծվում է սիրո հայտնի եռանկյունին:

ԾԹԵ Կարենը գիտի Տրդատի դեպի Հռիփսիմե ունեցած սերը, ապա Տրդատը լրիվ անտեղյակ է, որ Կարենը սիրում է Հռիփսիմեին: Հենց սա էլ հետաքրքիր է դարձնում ողբերգութեան բովանդակութեանն ու ընթացքը: Քրիստոնեական առասպելը լրիվ ներկայացնելու համար հեղինակը պատկերում է հեթանոսական կյանքի առանձին տեսարաններ: Գրանք են՝ երկրպագութիւն կուռքերին, կախարդական գուշակութիւն, դեերի առկայութիւն և նման տեսարաններ, որոնք շարունակ տեղի են տալիս քրիստոնեական կրոնի առավելութեանը: Ողբերգութեան ավարտվում է Գրիգոր Լուսավորչի հանդես գալով և հայ ժողովրդի դարձի պատմութեամբ:

Հեղինակի նպատակը պարզ է. փաստորեն նա դիմում է պատմական անցյալին՝ արդիական խնդիրներից ելնելով. «...«Հռիփսիմե» ողբերգութիւնը կոնկրետ պատմական իրականութեան արտացոլումն է, որի մեջ անդրադարձել են 17-րդ դարի վերջում կլովի հայ հասարակութեան մեջ տեղի ունեցող հասարակական-քաղաքական պայքարը, հանդիսանալով փայլուն իլյուստրացիա այն դրութի, որ գեղարվեստական գրականութիւնը ոչ միայն արտացոլում է իրականութիւնը, այլև ակտիվ կերպով ներգործում է այդ իրականութեան վրա»<sup>23</sup>,— գրում է թատերագետ Վ. Թերզիբաշյանը:

Լեհահայ մատենագրութեան մեջ կարևոր տեղ է գրավում նաև բառարանագրութիւնը: Գրալավագույն արտահայտութիւնը լեհահայ մատենագրութեան ականավոր դեմքերից մեկի՝ Ստեփանոս Ռոշքայի կազմած հայերեն-լատիներեն, լատիներեն-հայերեն երկհատոր բառարանն է, որն արժանացել է հայ գրականութեան մեծ երախտավորների բարձր գնահատականին: Այսպես, օրինակ, Ղ. Ալիշանը գրում է. «Իսկ ի ծանօթիցն մեզ ազգային բառարանաց՝ ճոխութեամբ բառից և պատշաճ դասավորութեամբ և լատին թարգմանութեամբ, քաջ ի բաց գերազանց է զայլովքն՝ Հայկազեան բառարանն Ստեփանոսի Ստեփանեան վարդապետի Ռօշքեանց Կամենիցացոյ...»<sup>24</sup>: Այս բառարանն ունի նաև որոշ հետաքրքրութիւն գրական տեսանկյունից<sup>25</sup>:

<sup>22</sup> Saint—Martin, Sur une tragedie armenienne, „Journal asiatique“, Paris, 1823. № 12.

<sup>23</sup> Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմութիւն, Եր., 1959, էջ 102:

<sup>24</sup> «Բազմավեպ», Վենետիկ, 1852, էջ 86:

<sup>25</sup> Ալիշանը Ռոշքայի կազմած բառարանի այլևայլ արժանիքների թվում դնում է միջնադարի գրականութեան որոշ հատվածներ, որոնք բառարանագիրը օգտագործել է իր աշխատութեան մեջ: Նա վկայակոչում է բառարանագրի ներքերած բանաստեղծական գողտրիկ հատվածները, որոնք

Ամփոփելով, կարող ենք ասել, որ լեհահայ գաղութը ոչ միայն հոգևոր սնունդ է ստացել մայր հայրենիքից, այլև իր հերթին, որոշ առումով, ներգործել է մայր հայրենիքի գրականության ու մշակույթի վրա, ներկայացնելով մտավոր կյանքի փոխազդեցության ինքնատիպ ու շահեկան մի դրսևորում:

**А. Г. ДОЛУХАНЫЯ** — Литература в армянской колонии Польши. — Возникновение армянских поселений в Польше относится к XI в. Численность армян, проживающих на территории Польши, особенно возрастает после падения Киликийского армянского царства (конец XIV—начало XV вв.). С этого времени в Польше складывается крупная армянская колония со своей богатой общественной и культурной жизнью. Здесь развиваются, в частности, историография, лексикография, лирическая и сатирическая поэзия, театр. Автор статьи кратко характеризует произведения видных историков Симеона Лехаци (Польского), Ованеса Каменечи (Каменецкого), Степаноса Рошки, Ованеса Авагерца, лирический поэтов Казара Тохатеци, Минаса Тохатеци, Акопа Тохатеци, Парсама Трапизонци и др.

անանուն են, բայց ուշագրավ են գեղարվեստական կատարելության առումով: Դրանցից են, օրինակ՝

1 Մով հանգարտիկ այեակ մեզմիկ  
Զտուփն տանէր յարքայ գտորիկ:

կամ՝

2 Տար աղեղնիկ իմ որդիկին  
Զի խազասցի ընդ ձեր մանկտին:

կամ՝

3 Արդինաֆաղ մրջիմն յամռան  
Համբար առնէ ինճն իւր ձմռան:

(«Բազմավեպ», 1852, էջ 94—95):

Այիշանը բերում է նաև մի ամբողջ տաղ նվիրված ղանազան հավթերի նկարագրին՝ արտուտիկի, ազոավի, թխկատարի, հոպոպիկի և այլն: Տաղի սկզբնատողն է՝ «Արտուտիկն զընեք վեղար, զերդ արեղայ աղօթարար» (Նույն տեղում, էջ 95):